ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2012թ. Փետրվարի 8 թիվ 16-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ "ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի "Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին" թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 20-ի "Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը գույք ամրացնելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության "Արագածոտնի մարզային փորձագիտական կենտրոն" պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տարածք հատկացնելու մասին" թիվ 606-Ա որոշման պահանջները ***կարգադրում եմ***

1. «Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Ապարան քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցում գտնվող վարչական շենքի առաջին հարկի աջ կառուցահատվածի վերջնամասի՝ 180.0 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող տարածքը (այսուհետ՝ գույք) «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին հանձնելու նպատակով ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ գույքի հանձնման-ընդունման աշխատանքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:
3. Կարգադրության կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Հ. Գևորգյանի վրա:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2012թ. փետրվարի 8-ի
Թիվ 16-Ա կարգադրության

ԿԱԶՄ

ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա. Բասենցյան	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ /նախագահ/
Ի. Բարսեղյան	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ
Ա. Ավագյան	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության առաջին կարգի մասնագետ
Հ. Շմավոնյան	'Ապարանի բժշկական կենտրոն' փակ բաժնետիրական ընկերության տնօրեն
Մ. Չալոյան	'Ապարանի բժշկական կենտրոն' փակ բաժնետիրական ընկերության գլխավոր հաշվապահ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ